Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-01-2023 թ. որոշմամբ
«ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿԻ 48
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00084
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-12-27
1.5 ՀՎՀՀ-ն		02565835
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94628338
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.fpwc.org
1.8 Էլեկտրոնային փոստը		info@fpwc.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	7	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Էկոգյուղերի զարգացման ծրագիր	120,400,000
	Անտառվերականգնման ծրագիր	18,794,178
	Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան	71,355,505
	Անտառային հրդեհների կանխարգելում	27,789,939

Digitally signed by NAHAPETYAN LUSINE 6807820089
Date: 2023.08.03 13:34:55 AMT

	Արջերի փրկության ծրագիր	406,821,986
	Արցախից փրկված առյուծի խնամք	3,346,401
	Մարդ-արջ կոնֆլիկտը մեղմելուն ուղղված ծրագիր Վայոց Ձորում	6,195,767
	Հրդեհների կանխագելմանն ուղղված իրազեկվածության բարձրացում, տեխնիկայի ձեռքբերում	25,444,345
	Վայրի կենդանիների փրկարար կենտրոնում արջերի լողավազանի կառուցում	7,917,183
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ծառատունկ	402,330
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Էկոգյուղերի զարգացման ծրագիր	120,400,000	
Արջերի փրկության ծրագիր	275,905,328	
Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան	27,284,251	
Անտառային հրդեհների կանխարգելում	27,789,919	
Արցախից փրկված առյուծի խնամք	3,348,401	
Անտառվերականգնման ծրագիր	7,517,183	
Մարդ-արջ կոնֆլիկտը մեղմելուն ուղղված ծրագիր Վայոց Ձորում	6,195,767	
Հրդեհների կանխագելմանն ուղղված իրազեկվածության բարձրացում, տեխնիկայի ձեռքբերում	25,444,345	
Ծառատունկ	402,330	
Վայրի կենդանիների փրկարար կենտրոնում արջերի լողավազանի կառուցում	7,917,183	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	502,204,707	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	502,204,707	

Նշումներ՝

Աուդիտորի եզրակացությունն ընթացքի մեջ է, այդ պատճառով կցված չէ

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___7___էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47
www. 4aconsulting.am
info@4aconsulting.am
CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման հիմնադրամի ղեկավարությանը և հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Վայրի Բնության և Մշակութային Պահպանման Հիմնադրամի (Հիմնադրամ)՝ և նրա դուստր Կազմակերպության («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Խմբի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2022 թվականի հունիսի 24-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար: Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

  Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր /Աուդիտի ղեկավար

26 հուլիս 2023թ.

ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
«ՖՈՐ ԷՅ ԽՍԱՆԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

	Ծնթ.	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Շնորհից եկամուտներ	5	394,617	333,819
Այլ եկամուտներ	6	25,772	22,294
Իրականացված ծրագրեր	7	(299,117)	(222,989)
Վարչական և այլ ծախսեր	8	(133,201)	(157,752)
Գործառնական գործունեությունից շահույթ		(11,929)	(24,628)
Ֆինանսական ծախս		(39)	(3,480)
Փոխարժ. տարբ. օգուտ/(կորուստ), զուտ		1,284	27,504
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		(10,684)	(604)
Շահութահարկի գծով ծախս		-	-
Ֆինանսական տարվա ընդամենը համապարփակ (վնաս)/շահույթ		(10,684)	(604)

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 7 - 22) հաստատվել են Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման հիմնադրամ ղեկավարության կողմից 26.07.2023թ., ստորագրությամբ

Ռուբեն Խաչատրյան, Տնօրեն

Կարինե Ղարիբյան, Գլխավոր հաշվապահ

	Ծնթ.	31.12.2022թ. հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	811,976	693,861
Ոչ նյութական ակտիվներ		35	70
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	10,764
		812,011	*704,695*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	96,563	96,498
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	93,164	36,873
Տրված փոխառություններ	12	18,036	2,037
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	92,950	1,988
		300,713	*137,396*
Ընդամենը ակտիվներ		*1,112,724*	*842,091*
Զուտ ակտիվներ			
Կուտակված շահույթ (վնաս)		(28,653)	(25,236)
		(28,653)	(25,236)
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	14	11,823	26,464
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	809,626	672,006
		821,449	*698,470*
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	14	2,653	21,135
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	83,700	76,006
Եկամուտներին վերաբերող շնորհներ	17	233,575	71,716
		319,928	*168,857*
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		*1,112,724*	*842,091*

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կուտակված շահույթ/(վնաս) հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Մնացորդ առ 1 հունվար 2021թ.	(24,632)	(24,632)
Կուտակված շահույթ (վնաս)	(604)	(604)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2021թ.	(25,236)	(25,236)
Կուտակված շահույթ (վնաս)	(10,684)	(10,684)
Ճշգրտում	7,267	7,267
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2022թ.	(28,653)	(28,653)

Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման հիմնադրամի
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցների մուտք	14,481	12,032
Ստացված նվիրատվություններ և շնորհներ	687,886	484,299
Այլ մուտքեր	7,037	848
Վճարումներ գնումների գծով	(176,433)	(346,733)
Ենթադրամաշնորհների տրամադրում	(6,059)	(16,093)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(110,404)	(61,894)
Վճարումներ այլ հարկերի գծով	(9,800)	(13,615)
Այլ ելքեր	(9,981)	(581)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***396,727***	***58,263***
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(253,332)	(65,601)
Փոխառությունների տրամադրում, զուտ	(15,999)	2,564
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(269,331)***	***(63,037)***
Ֆինանսավորման գործունեությունից		
Վարկերի և փոխառություններ, զուտ	(33,123)	(21,271)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(33,123)**	**(21,271)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	***94,273***	***(26,045)***
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,311)	(2,402)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	1,988	30,435
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	92,950	1,988

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 03.08.2023 13:34